

ԿԱԶԻՄԻՐ ԶԱԼԵՎՍԿԻ, ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ*

Բանալի բառեր – ազգային կուսակցություններ, Կազմիր Զալևսկի, մարքսիզմ, սոցիալ-դեմոկրատիա, ՀՅ Դաշնակցություն, Ֆելիքս Զերժինսկի:



Մոսկվայում վերջերս ակտիվ գիտահրատարակչական գործունեությանը զբաղվող «URSS» հրատարակչական խումբն ի թիվս այլ ուշագրավ գրքերի «Խորհրդածելով մարքսիզմի մասին» մատենաշարով լույս է ընծայել «Ազգային կուսակցությունները Ռուսաստանում. 20-րդ դարի սկիզբ. Լեհաստան: Մերձբալթյան երկրամաս: Լիտվա: Ուկրաինա: Կովկաս: Հրեական կուսակցություններ»¹ ուշագրավ գրքույկը:

Դեռևս 1914 թվականին Սանկտ Պետերբուրգում լույս տեսած «Հասարակական շարժումները Ռուսաստանում 20-րդ դարի սկզբին» ժողովածուի² երրորդ հատորի 227-ից 344 էջերում տեղ գտած այս ուսումնասիրությունը 2017-ին Մոսկվայում տպագրվել է արդեն երկրորդ հրատարակությամբ, բայց այս անգամ առանձին գրքույկով: Ավելի քան 100 տարի անց վերահրատարակելով այս հետաքրքրական գործը, որի հեղինակը

նակը Կազիմիր Զալևսկի կեղծանունի տակ թաքնված հայտնի հեղափոխական, մարքսիստ-տեսաբան Ստանիսլավ Տրուսևիչն³ է, «URSS» հրատարակչությունը

* Ընդունվել է տպագրության 30.06.2017:

1 Տե՛ս **Залевский К.** Национальные партии в России: Начало 20-ого века: Польша. Прибалтийский край. Литва. Украина. Кавказ. Еврейские партии, Издание второе, М., URSS, 2017.

2 Տե՛ս Общественное движение в России в начале 20-го века. Т. 3. СПб.: Типография товарищества «Общественная польза», 1914, сс. 227-344.

3 **Կազիմիր Զալևսկի (Սանիսլավ Սանիսլավի Տրուսևիչ, 1871-1918)**, լիտվական, լեհական և ապա համառուսաստանյան հեղափոխական շարժման գործիչ, ծագումով՝ լիտվացի: Ակտիվորեն մասնակցել է լեհական սոցիալ-դեմոկրատիայի գործունեությանը, բազմիցս բանտարկվել է, իսկ հետագայում արքայազն է Սիբիր: Դեռևս 1900 թ. հունվարին Մինսկում կայացած համագումարում Մ.

րակչական խումբը ներկա հորեյանական տարում փորձել է «թարմացնել» իր ընթերցողների պատմական հիշողությունը:

Մեզ համար սույն գրքույկը մեծ հետաքրքրություն է ներկայացնում որպես 20-րդ դարակազմի մարքայան աշխարհայեցողության դիրքերից իրակա- նացված՝ Ռուսաստանի քաղաքական կուսակցությունների որոշակի հատ- վածի գործունեության ու աշխարհայեցողության ուսումնասիրության փորձ, որոնք ներկայացնում էին նրանում բնակվող տարբեր ժողովուրդների, այդ թվում և մեր շահերը: Այսինքն՝ սա Ռուսաստանի ազգային կուսակցությունների ձևավորման համառոտ պատմությունն է և ապա նրանց գործունեության 1905-1907 թթ. ժամանակահատվածի քննական վերլուծությունը՝ մարքայան աշխարհայեցողության ուսումնասիրությունը:

Գրքույկի վերահրատարակությունը թույլ է տալիս մեզ՝ պատմագետ- ների ներկա սերնդին, ևս մեկ անգամ արձանագրել այն իրողությունը, որ ռուսական բոլշևիզմի քաղաքական իշխանության գալու դարաշրջանում՝ 1917-1921 թվականներին, ու մանավանդ ԽՍՀՄ գոյության 70 տարիներին ազգային կուսակցությունների գործունեության գնահատման հարցում ար- ձանագրվել են լրջագույն ձևախեղումներ: Ուստի 1914-ին առաջին հրատա- րակությամբ, իսկ ներկայումս առանձին գրքույկով լույս տեսած ու հստա- կորեն մարքայան գաղափարախոսության ուսումնասիրությունը շարադրված այս ու- սումնասիրությունը պատմության ընկալման ժամանակային կամ դիաքրոնիկ հարթության վրա լուրջ հակասության մեջ է հետագայի «մարքսիստական» որակված աշխատություններում Ռուսաստանի ազգային կուսակցությունների գործունեությանը տրված գնահատականների հետ:

Նման հակասությունն առավել առարկայական ու ցայտուն կերպով դրսևորվում է տվյալ դարաշրջանի Կովկասում ամենաազդեցիկ քաղա- քական ուժի՝ Հ Յ Դաշնակցության գաղափարախոսության ու գործու- նեության գնահատման մեջ, ուստի ներկա գրախոսականում մենք կսահ- մանափակվենք այդ **տիպական օրինակի** քննությամբ: Որովհետև եթե խորհրդային իրականության պայմաններում ՀՅԴ-ի մասին ձևավորված կարծրատիպերը համեմատենք գրախոսվող գրքույկում առկա մարքսիս- տական գնահատականների հետ, ապա պետք է որ հարց տանք ինքներս մեզ. 1914 թվականից մինչև Հոկտեմբերյան հեղաշրջումն ու ԽՍՀՄ-ի ձևավորումն անցած ընդամենը մի քանի տարիների ընթացքում ՀՅ Դաշնակցությունը՝ սա էր անձանաչելիորեն փոխվել որպես կուսակցություն, թե՛ մարքսիզմը՝ որպես տեսություն: Ինքնին հասկանալի է, որ այս փակուղային երկրնտրանքը ընդամենը մեկ բացատրություն կարող է ունենալ. հետագա տարիներին իրենց «մարքսիստ» համարող խորհրդային պատմաբանների ՀՅԴ-ի հանդեպ որդեգրած ժխտական վերաբերմունքը գաղափարախոսական հիմնավորումի փոխարեն բոլորովին այլ պատճառներ ուներ:

Այն իրողությունը, որ Ռուսաստանի ազգային կուսակցությունների գոր- ծունեության ուսումնասիրության ընթացքում առաջին հերթին Ռուսական առաջին հեղափոխության՝ 1905-1907 թվականների վրա կենտրոնացած

Կոզլովսկու և Ֆ. Ջերժինսկու հետ միասին միավորել է լեհական և լիտվական սոցիալ-դեմոկրատ- ներին մեկ կուսակցության մեջ: Իսկ Ռուսական առաջին հեղափոխության տարիներին հարել է Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության Վ. Լենինի գլխավորած բոլշևիկյան թևին: Բազմաթիվ հրապարակումներով հանդես է եկել ժամանակի հեղափոխական մամուլում, իսկ մահվանից առաջ՝ 1918 թվականին եղել է խորհրդային «Իզվեստիա» թերթի աշխա- տակիցը: Ավելի մանրամասն տե՛ս **Масанов И. Ф.** Словарь псевдонимов русских писателей, ученых и общественных деятелей в 4 томах. Т. 4. Москва. 1960. с. 476: Տե՛ս նաև **Залевский Казимир.** «Большая Советская Энциклопедия». Т. 26. Москва. 1933. с. 105.

Կ. Զալևսկու աշխատության մեջ Կովկասում գործող քաղաքական ուժերի շարքում առանցքային քաղաքական դերակատար է համարվում հենց ՀՅ Դաշնակցությունը, երևում է նրանից, որ շարադրանքում վրաց Սոցիալիստ-ֆեդերալիստների, ինչպես նաև կովկասահայ իրականության մեջ առկա մյուս քաղաքական ուժերից յուրաքանչյուրի պատմությանն ընդամենը 1-2 էջ է հատկացվել, իսկ ՀՅԴ-ի գործունեությանը՝ ամբողջ 9 էջ: Նրանում ՀՅԴ-ն ներկայացվում է որպես «միակ հայկական կուսակցությունը, որը ազդեցիկ դեր է խաղացել մեր կողմից դիտարկվող 1905-1907 թթ. ժամանակահատվածում...»⁴:

Պատմական համառոտ ակնարկի միջոցով ՀՅԴ ձևավորման գործընթացը համարելով 19-րդ դարի հայ իրականության մեջ ծավալված լայն զանգվածների ինքնագործունեության արդյունք՝ մարքսիստ հեղինակը դա կապում է Հայաստանի տարբեր մասերում կապիտալիզմի զարգացման հետ: Այդ համատեքստում նա օրինաչափ ու անխուսափելի է համարում հայ լուսավորականությանը ներկայացնող մշակական-առաջադիմականների և նրանց հակադրված ու Հայ առաքելական եկեղեցու հեղինակության վերականգնմամբ մտահոգ «Նոր-դար»-ի «նացիոնալիստական» քաղաքական խմբի պայքարը: Կ. Զալևսկու կարծիքով՝ թեև ««Դաշնակցություն» կուսակցությունը դուրս է եկել առաջադիմականների (պրոգրեսիստների) շարքերից, բայց նրա գաղափարախոսությունը կարծես թե երկու խմբերի սինթեզն է, ընդ որում՝ իր մեջ ներառելով նաև նորագույն սոցիալիստական միտումները»⁵:

Ուշադրություն է գրավում նաև այն փաստը, որ թեև Կ. Զալևսկին սխալմամբ ՀՅԴ ձևավորման վայր է համարում թուրքական, այսինքն՝ Արևմտյան Հայաստանը, բայց միևնույն ժամանակ կարծում է, որ ազգային ճնշման դեմ պայքարի և ազգային ազատագրության գաղափարը «ՀՅ Դաշնակցության մոտ կերպավորվել է Հայաստանի բոլոր մասերը մեկ անկախ պետության մեջ միավորելու ձգտումի տեսքով»⁷: Ակնհայտ է, որ Միացյալ Հայաստանի տեսլականը քողարկված կերպով միշտ էլ ներկա է եղել ՀՅԴ քաղաքական ձգտումների խորքում, բայց միայն 1919-ին է պաշտոնապես ձևակերպվել իբրև ծրագրային նպատակ: Սա ցույց է տալիս, որ մինչ այդ տվյալ փաստն արձանագրած հեղինակը մոտիկից ծանոթ է եղել ՀՅԴ գործունեության ու գաղափարախոսության նրբերանգներին, անգամ՝ կուսակցության «ներքին խոհանոցի» որոշ առանձնահատկություններին: Ուստի պատահական չէ, որ արդեն Առաջին աշխարհամարտի նախօրեին նա արձանագրել է անկախության ձեռքբերման հարցում «տարբեր հոսանքների» առկայությունը ՀՅԴ ներսում. «...մի մասը մոտ ապագայի խնդիր է համարում անկախ հայկական պետության ստեղծումը, մյուսները՝ ավելի հեռավոր իդեալ՝ ներկա պահին առաջադրելով այդ երկրի մասերից յուրաքանչյուրի լայն ինքնավարության պահանջը»⁸:

Միանգամայն հիմնավորված է նաև Կ. Զալևսկու այն պնդումը, որ չնայած իրեն բնորոշ սոցիալիստական միտումներին, ՀՅԴ-ն արդեն 20-րդ դարասկզբի հայ իրականության մեջ դարձել էր համազգային կուսակցություն, ինչին մեծապես նպաստել է 1903-ին Հայ եկեղեցու գույքի բռնագրավման դեմ ուղղված պայքարը: Ուստի 1905-ին ««Դաշնակցության» շարքերում միա-

4 Նույն տեղում, էջ 80:

5 Սինթեզը - Գ. Խ.:

6 Նույն տեղում, էջ 81:

7 Նույն տեղում:

8 Նույն տեղում, էջ 82:

վորվել էին և՛ մտավորականության լայն շերտերը, և՛ բուրժուազիայի զգալի մասը, և՛ գյուղացիները, և՛ այն բանվորական տարրերը, որոնք դեռևս չէին գիտակցում առանձին դասակարգային քաղաքականության անհրաժեշտությունը, և՛ այսպես կոչված «գինվորների» ջոկատները կազմած լյուսպեն պրոլետարիատի մի մասը»⁹:

Հիմնվելով նման հաստատումների վրա՝ հեղինակը ներկայացնում է նաև տվյալ դարաշրջանի ՀՅԴ-ին բնորոշ երկվությունը. մի կողմից՝ սոցիալիզմի դրոշի տակ կանգնելու, բայց մյուս կողմից էլ՝ լիարժեքորեն սոցիալիստական գործունեություն չձգվելու զույգ իրողությունները և եզրակացնում, որ «Հայաստանում «Դաշնակցությունը» խաղացել է ոչ թե սոցիալիստական, այլ բուրժուա-դեմոկրատական կուսակցության դեր»¹⁰: Եթե հաշվի առնենք այն իրողությունը, որ գրքույկի հեղինակն առաջնորդվում էր մարքսյան աշխարհայեցողությանը բնորոշ հասկացության համակարգով և նկատի ուներ ՀՅԴ գործունեության օբյեկտիվ արդյունքները և ոչ թե գաղափարախոսությունն ու հեռավոր նպատակները, ապա ակնհայտ կդառնա, որ Զալևսկի-Տրուսկիչը բավականին սթափ գնահատականներ էր տալիս ՀՅ Դաշնակցության գործունեությանը և մեծապես կարևորում էր նրա դերը ինչպես հայ ժողովրդի ազգային իրավունքների պաշտպանության ասպարեզում, այնպես էլ ցարական իշխանությունների բռնապետական քաղաքականության դեմ ուղղված համառուսաստանյան հեղափոխական պայքարում:

Եթե մի պահ կտրվենք գրախոսվող գրքույկի բովանդակությունից և այս ուշագրավ գնահատականները կրկին համեմատենք իրենց մարքսիստ համարած խորհրդային տեսաբանների ու մասնագետ պատմաբանների դրույթների հետ, ապա ակնհայտ կդառնա, որ վերջիններս ՀՅԴ գործունեության խորքային էությունն աղավաղելու համար հիմնավորապես նենգափոխել են միապետական կարգերի դեմ ուղղված դեմոկրատական (ըստ մարքսիստների՝ բուրժուա-դեմոկրատական), այսինքն՝ առաջադիմական ազգային-ազատագրական շարժումների բնույթն ու էությունը:

Ուշագրավ են նաև Կ. Զալևսկու գնահատականները Ռուսական առաջին հեղափոխության փորձի անփոփումը հանդիսացող ՀՅԴ 1907 թվականի ծրագրում առկա՝ Ռուսաստանի պետական կառույցը ֆեդերատիվ հիմունքներով վերափոխելու առաջարկների վերաբերյալ: Կուսակցության ծրագրում հստակորեն ձևակերպված Օսմանյան կայսրության կազմում՝ Արևմտյան Հայաստանի, իսկ Ռուսաստանի կազմում՝ ինքնավար Անդրկովկասի մասին ՀՅԴ քաղաքական պահանջներում Կ. Զալևսկին նախ արձանագրում է «սեպարատիստական միտումներ»¹¹, բայց դրանից անմիջապես հետո հավելում է, որ գործնական քաղաքականության մեջ, մանավանդ 1905 թվականի հեղափոխության աշնանային վերելքի շրջանում, ՀՅԴ-ն Ռուսաստանում «ավելի շատ պայքարել է իշխանության առանձին ներկայացուցիչների, քան կառավարության՝ որպես այդպիսինի դեմ»¹²: Այս հարցում հեղինակը կրկնել է վրաց սոցիալ-դեմոկրատիայի տեսաբանների այն գնահատականը, որ իր նման «պասիվությամբ» ՀՅԴ-ն իրականում ցանկանում էր չգրգռել ցարական կառավարությանն ու նրան չնդել հայերի հակառակորդ թաթարների ու թուրքերի կողմը: Ուստի բնական է, որ սոցիալ-դեմոկրատ Կ. Զալևսկին ցավով նկատում էր, որ իր բանակն ու զգալի նյութական միջոցներն ունեցող կու-

9 Նույն տեղում:
10 Նույն տեղում:
11 Նույն տեղում, էջ 83:
12 Նույն տեղում, էջ 86:

սակցությունից Ռուսաստանի հեղափոխական շարժման ներկայացուցիչների սպասելիքները ակնհայտորեն ավելի մեծ էին:



Ստանիսլավ Տրուսևիչ
(Կազմիր Զալևսկի)

Կ. Զալևսկու գրքույկն ընթերցողին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում նաև ՀՅԴ դրամական միջոցների աճի դինամիկայի, մամուլի և ոչ պարբերական հրատարակությունների, ինչպես նաև կուսակցության ծրագրում տեղ գտած սոցիալական, կրթական ու մշակութային ուղղվածության պահանջների վերաբերյալ: Դրանք քաղված են ոչ միայն Սոցիալիստական ինտերնացիոնալի Շտուտգարտի կոնգրեսին կուսակցության ներկայացրած հաշվետվությունից, այլև հայկական, վրացական և այլ աղբյուրներից:

Ուրեմն Կ. Զալևսկի կեղծանունի տակ թաքնված Ստանիսլավ Տրուսևիչի 1914-ին հրապարակված ուսումնասիրությունը տպագրելով առանձին գրքույկով՝ Մոսկ-

վայում գործող «URSS» հրատարակչական խումբը ռուս ընթերցողին հասկանալի մարքայան գաղափարախոսության ռապյակով ներկայացրել է ցարական բռնակալության դեմ պայքար մղած ազգային կուսակցությունների՝ հետագայի ստալինյան կեղծարարությունից զերծ պատմության շարադրանքը, որի հոլովություն իր պատվավոր տեղն ու ազդեցիկ դերակատարությունն է ունեցել Հայ Յեղափոխական Դաշնակցությունը:

Մական Կ. Զալևսկու աշխատության 2017 թվականի վերահրատարակությունն ամենևին էլ Ռուսաստանի ազգային կուսակցությունների ավելի քան ուշացած պատմական ռեպրիլիտացիայի, այսինքն՝ վերականգնումի ու արդարացման գործընթացի մասը չէ: Այդ հանգրվանը մենք բոլորս, այդ թվում նաև ինքը՝ հետխորհրդային Ռուսաստանը բարեհաջող կերպով հաղթահարել ենք: Իսկ ահա վաղուց արդեն անկախ երկրներ հանդիսացող Լեհաստանում կամ Իսրայելում և անցած քառորդ դարում նրանց օրինակին հետևած՝ նախկին խորհրդային հանրապետություններում, հրաշալի կերպով տեղյակ են իրենց ազգային կուսակցությունների պատմությանը: Դա վերաբերում է նաև հայաստանյան գիտական հանրության համար արդեն անցյալում մնացած՝ Հ Յ Դաշնակցության գործունեության վերազնահաման հարցին: Անցած քարոզ դարում ու մանավանդ՝ վերջին տասնամյակում մեզանում այնքան փաստաթղթեր և ուսումնասիրություններ են հրապարակվել ՀՅԴ գործունեության մասին, որ բազմակի անգամ գերազանցել են ժամանակին Կ. Զալևսկու նման հետազոտողների ունեցած սահմանափակ աղբյուրագիտական հենքը: Այդ ընթացքում ՀՅԴ պատմությունը ներկայացվել է նաև Ռուսաստանում՝ ռուս ընթերցողի համար հասկանալի լեզվով:

Ուրեմն «URSS» հրատարակչական խումբն իր ներկա ակտիվ հրատարակչական գործունեությամբ փորձում է լուծել արդեն հետվերականգնողական (պոստռեպրիլիտացիոն) շրջափուլի խնդիրները: Դա Ռուսաստանի հանրությանը թույլ է տալու բացահայտել արդեն անկախացած հարևանների հետ ժամանակին ունեցած այն քաղաքակրթական ընդհանրությունները, որոնց կրողներն էին նախկին ցարական Ռուսաստանի ընդարձակ տարածքներում իրենց գործունեությունը ծավալած ազգային կուսակցությունները:

Նման խնդրի լուծումն այսօր անհրաժեշտ է ոչ այնքան մեզ՝ հայերիս, որքան 1917 թվականի Հոկտեմբերյան հեղաշրջումից 100 տարի անց էլ սեփական քաղաքակրթական ընտրությունը չկատարած՝ Ռուսաստանի Դաշնության՝ ինչպես ռուսաստանաբնակ, այլպես էլ աշխարհասփյուռ ռուսալեզու հանրությանը:

Իսկ մենք, ընթերցելով այս աշխատությունը տարիների հեռավորությունից, չենք կարող չարձանագրել, թե որքան դառն էր Ռուսաստանի ազգային կուսակցություններին բաժին ընկած **ճակատագրի հեզնանքը**: Իր գաղափարակցի ու հին ընկերոջ, լեհ ազնվական Ֆելիքս Ձերժինսկու հետ միասին լեհ-լիտվական սոցիալ-դեմոկրատիայի հիմքերը դրած և ապա ցարական բանտերում ու արտրավայրերում տառապած Կազիմիր Զալևսկին կարող էր արդյոք երևակայել, որ 1917-ին «երկաթե Ֆելիքսի» հիմնած Համառուսաստանյան արտակարգ հանձնաժողովը (չեկան) զանգվածաբար գնդակահարելու և տանջամահ է անելու այդ նույն «մութ բանտերում» տառապած բախտակից կուսակցության՝ ՀՅ Դաշնակցության հազարավոր անդամներին ու համակիրներին...

Գ. Խ.

Kazimir Zalewski
NATIONAL PARTIES IN RUSSIA

Key words – national parties, Kazimir Zalewski, Marxism, Social Democracy, ARF Dashnaktsutyun, Felix Dzerzhinsky.

G.Kh.

Казимир Залевский
НАЦИОНАЛЬНЫЕ ПАРТИИ В РОССИИ

Ключевые слова – национальные партии, Казимир Залевский, марксизм, социал-демократия, АРФ Дашнакцутюн, Феликс Дзержинский.

Դ.Խ.

ԳՐԱԿՐՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. (ԺԵ) ԳՐԱԿՐ, ԹԻՎ 2 (58), ԿԱՐԻՆ-ԿՈՒՆԻԱ, 2017

ՎԷՎ համահայկական հանդես